

Վարի որակի բարելավում

Վարը հողի մշակման մի գործընթաց է, որի ժամանակ վարելաշերտը որոշակի խորությամբ շրջվում է կամ առանց շրջվելու փխրեցվում: Բույսերը մշակելու ընթացքում հողը ամրանում է և ձեռք բերում վատ ֆիզիկա-քիմիական և կենսաբանական հատկություններ: Այդ պատճառով վարի հիմնական նպատակն է ստեղծել վարելաշերտի փխրուն շերտ, որի հետևանքով լավանում է օդի և ջրի թափանցումը հողի մեջ, ուժեղանում է հողի կենսաբանական գործունեությունը և սննդանյութերի կուտակումը, բացի այդ հողի մշակմամբ պայքար է տարվում մոլախոտերի և բույսերի վնասատուների դեմ: Մոլախոտերի դեմ տարվող պայքարն արտահայտվում է նրանով, որ մշակման ընթացքում մի կողմից ոչնչանում են աճած մոլախոտերը (նրանց կտրատելու ճանապարհով), մյուս կողմից հողում եղած սերմերի համար ստեղծվում են ծլելու պայմաններ, որոնք հետագա մշակությունների ընթացքում ոչնչանում են: Հողի մշակման ժամանակ վնասատուների մի մասը մեխանիկական վնասվածք են ստանում և ոչնչանում, իսկ մյուս մասն էլ ոչնչանում են՝ ընկնելով վարելաշերտի խորքը:

Հիմնավորված է, որ գյուղատնտեսական բույսերից բարձր և կայուն բերքի ստացումն ապահովելու համար կարևոր նշանակություն ունի հողի ճիշտ մշակումը՝ վարը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մի շարք գյուղացիական տնտեսությունների հողատարածքներում չեն պահպանվում վարի որակական ցուցանիշները՝ վարի խորությունը, կատարայնության և առի շրջման աստիճանը, խարակայնությունը, որի հետևանքով առաջանում է մշակաբույսերի բերքի նվազում: Ուստի անհրաժեշտ է բարելավել վարի որակը և ապահովել՝

1.Վարի խորությունը, որը գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացման գործում ունի կարևոր նշանակություն: Որքան խորն են վարում հողը, այնքան բարձր բերք է ստացվում: Ոչ խորը վարը, ընդհակառակը, թողնում է բացասական ազդեցություն: Այդ ժամանակ տեղումները չեն թափանցում հողի մեջ, հոսում են նրա մակերեսով, միաժամանակ լվանալով և իրենց հետ տանելով բույսերի սննդի տարրերի զգալի մասը, վատացնում են հողի ֆիզիկական հատկությունները:

Վարի խորությունը պայմանավորված է մշակվող մշակաբույսերի, դաշտը աղտոտող մոլախոտերի տեսակով և վարելաշերտի հզորությամբ: Եթե բույսերը խորը գնացող արմատային ցանց չունեն, նրանց սովորաբար շատ խորը չեն վարում, ինչպես հացաբույսերի համար: Եթե բույսերն ունեն խորը գնացող արմատային ցանց (տեխնիկական մշակաբույսեր, բազմամյա խոտեր) և հողում պտուղ են ձևավորում (ճակնդեղ, կարտոֆիլ և այլն)՝ կատարում են համեմատաբար խորը վար: Եթե տարածված են միամյա մոլախոտեր, կատարում են երեսվար, իսկ բազմամյաների դեպքում՝ խորը վար: Սակայն վարի խորությունը պայմանավորված է հիմնականում վարելաշերտի հզորությամբ: Որքան վարելաշերտը հզոր է, այնքան խոր են վարում:

Վարն ըստ խորության լինում է մակեսային, խորը և միջին: Մինչև 20 սմ խորությամբ վարը կոչվում է մակերեսային, 20-22 սմ՝ միջին, 22 սմ-ից ավելին՝ խոր: Ընդունված է, որ եթե վարելաշերտի հզորությունը թույլ է տալիս, պետք է վարել հացահատիկների համար՝ 20-22 սմ, եգիպտացորենի համար՝ 25-27 սմ, իսկ արմատապալարապտուղների ու տեխնիկական մշակաբույսերի համար՝ 28-30 սմ խորությամբ:



2. Կատարայնությունը, վարելիս առը շրջելու ժամանակ կատարները որքան իրար մոտ են ստացվում, այնքան վարը որակյալ է և հակառակը, որքան իրարից հեռու են, որը շատ հաճախ նկատվում է մեր դաշտերում, այնքան վարի որակը ցածր է: Կատարները հեռու լինելիս գուրթանի խոփը լրիվ ընդգրկմամբ հողաշերտը չի կտրում, այլ կտրում և շրջում է ընդգրկումից ավելի հողաշերտ, որի պատճառով շրջված առի տակ տարածություն է մնում և կատարները ստացվում են հեռու:

3. Առի շրջման աստիճանը: Ճմուռ հողերում վարի որակը կախված է առի շրջման աստիճանից: Որքան առը լրիվ շրջվի, այնքան վարը որակյալ կլինի:

4. Խարակայնությունը: Վարի ժամանակ որքան խարակները քիչ լինեն կամ բոլորովին չլինեն, այնքան վարը որակյալ է:

5. Վարի ժամանակը: Վարի որակը կախված է նաև հողի խոնավության աստիճանից: Վարը որակյալ է ստացվում, երբ այն կատարում են հողի 50-60% խոնավության պայմաններում, այս դեպքում հող քեշի է և փշրվող, իսկ երբ վարելաշերտի խորությունից վերցրած և ձեռքի ափի մեջ գունդ արած հողը գոտկատեղի մակարդակից գետնի վրա բաց թողնելիս չի փշրվում, որեմն քեշը չի եկել, խոնավությունը 50-60%-ից ավելի է և վարել չի կարելի:



6. Վարի արագությունը: Վարի որակի վրա զգալի ազդեցություն է թողնում նաև գուրթանի շարժման արագությունը: Որքան արագ է շարժվում գուրթանը, այնքան լավ է փշրվում վարելաշերտի հողը և տալիս որակով վար: Սակայն վարի արագությունը անսահմանորեն ավելացնել չի կարելի, այն կարելի է ավելացնել մինչև որոշակի սահման, որից ավելի դեպքում հողաշերտը շարժվում է, չի պառկում ակոսի մեջ և ավելի շատ է փռվում: